

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք

Ծրանկադեռ գործի (Celescopio). — Պէլին՝ ծածկադէտ անուամբ գործի մի հնարեց որ կը բաղկանայ ելեկտրական լամպարէ, և մարդուս մարմնոյն զանազան խոռոչքը լուսաւորելու կը ծառայէ:

Գործւոյն կազմութիւնը յայսմէ, որ բիւրեղի կտոր մը լուսաւոր ճառագայթները կ'անդրադարձնէ առանց ջերմութիւնը ճառագայթելու. և այնու կատարելապէս կը լուսաւորէ ոնգային խոռոչքը, կոկորդը, առաւտի (vessie) ներսի կողմն՝ հատման միջոց, ներքնաթաղանթային (péritoine) խոռոչը, և այլն:

Ամբողջական գործին կը բաղկանայ փոքրիկ լապտերէ մը՝ զետեղել առաձգական խիժէ փոքրիկ գունտի մը մէջ, զանազան մեծութեամբ բիւրեղի կտորներով, որք յատկապէս յարմարցուած են իւրաքանչիւր խոռոչներու զորս կ'ուզենք լուսաւորել:

Մինչդեռ վիրաբոյժն հատման գործողութիւնը կը կատարէ, իւր օգնականն՝ ելեկտրական բարդի հետ հողորդակցութիւն ունեցող լապտերը ձեռքը բռնած է, և փոխանակչի մը ձեռքը լոյսը կը կանոնաւորէ:

Լատրի հեռախօս գործի. — Լաութ նոր հեռախօս գործի մի հնարեց, որ կը տարբերի էապէս Պէլինի և այլոց զրութիւններէն: Չայնը կը փոխանցէ ստեղան ձեռք՝ որ ուսոյ վրայ կը յենու և ձայնական գործարանաց հետ կը հաղորդակցի:

Խօսելու միջոց ստեղնը կը թրթռայ, հոսանքին մէջ կը սկսին ծածանմունքներ ձևանալ, որք փոխանցիչ թելին ձեռք կ'երթան կը հասնին մերձաւոր կայարանը գտնուող գործւոյն, և լսելի կ'ըլլան սկանջաց:

Նոր հեռախօսն ամենեւին թաղանթ չունի. ստեղնը և ընդունիչն (receveur) այնպէս միացած են իրարու, որ յետինս մերձեցնելով ականջաց՝ ստեղնը կու գայ կը հանգչի ուսոյն այն մասին վերայ, յորում ձայնական գործարաններու միանց շարժմունքն աւելի զգալի են:

Այս գործւոյն ընտրելագոյն յատկութեանց մին է՝ խօսող անձին

յօղաւորեալ բառերը միայն փոխանցել. իսկ տեղւոյն մէջ եղող շառաշն կամ աղաղակն՝ գործւոյն վրայ ամենեւին ազդեցութիւն չունին:

Տանձ և խճճոր պահելուց կերպ.— Ֆանօ, գեղեցիկ յօղուած մի գրած է ձմեռնային տանձերու և խնձորներու պահպանութեան վրայ, զոր հօս կը համառօտենք:

Կ'ըսէ, թէ կարելի եղածին չափ երկար ժամանակ պահելու համար տանձերն և խնձորները՝ կարևոր է,

Ա. Դանդաղեցնել այն ամենայն երևոյթքն որք կը փութացնեն պտղոց հասունութիւնն, որպէս զի այսու կարենայ ուշանալ հասունացեալ պտղոց շաքարին ալքոհլական խմորումը, զոր կը զգանք՝ պտղատուն մի մտած ատեննիս՝ առած ոգեղէն հոտերնէս:

Բ. Արգելուլ ալքոհլական խմորումը՝ ապականեալ խմորման ժամանակը երկարաձգելու համար, որ նոյն միջոց կրնայ պատահիլ:

Որպէս զի կարենանք հասնիլ այս կրկին նպատակաց, պէտք չէ պտղատանց օդը փոխել, և բարեխառնութիւնն՝ հարիւրամասն շերմաչափի 6°-8° մէջ ըլլալու է. եթէ բարեխառնութիւնն ըլլայ շատ նուազ, պտղոց հասունանալն ամբողջապէս կը դադրի: Պտղատանց խոնաւութիւնն պէտք է բառնալքըրորուկ կրածնի (chlorure de calcium) գնիւով և ոչ կիր. վասն զի յետինս բաց 'ի խոնաւութենէ, կը բառնայ միանգամայն ածխածնական թթուութն (acide carbonique), որ օտապարէ և դանդաղեցնելու վերոյիշեալ խմորումը: Հուակ ուրեմն, լոյս մոնալու չէ պտղատան մէջ, վասն զի խմորումը կ'երագէ:

Յուրտ աշխարհաց մէջ տանձերը և խնձորները պահելու համար 'ի սառեցմանէ, 30 հարիւրորդամեզր բարձրութեամբ յարդով կը ծածկեն. բայց լաւագոյն է բանալ յաճախ և շարժել տեղերնէն, որպէս զի եթէ պտուղները շատ տաքցած ըլլան, քիչ մի օդ առնուն:

Յքի շինելու կամ պահեստի համար սահմանուած պտուղներն պէտք է շեղակուտել, ջանալով միշտ թողուլ անմրպետներ ուսկից կարենայ օդ բանիլ: Յայտ է թէ նախագասելի է շինել տեսակ մի ցանց և պտուղները անոր վրայ շարել. սակայն ասոր գործադրութիւնն անհնար եղած ատեն, կը ստիպուինք իրարու վրայ զանոնք դիզել. բայց գոնեայ պէտք է ուշ գնել, որ դեռ նոր քաղուած պտուղներն երկու երեք օր հովահարեալ տեղ մը յարդի վրայ վրձուին. այնու կը չորնան և առանց վախի կրնան շեղակուտիլ:

Հրազիւնուց ձայրման՝ շնչեաց գործարանիս վրայ ըրած ազդեցութիւնքն.— Հրազիւնուց ձայթումը բազադրեալ շառաշ մ'է որ յառաջ կու գայ, ա. գործւոյն մէջէն գնդակին անցած ժամանակ եղեգան թրթռալէն, ք. Շարժման փոխանցուելէն՝ գործւոյն երկրորդական

մասանց և իրեն մերձակայ իրաց, և հետևաբար անոնց թրթռալէն, գ. վառօղէն՝ որ բանի գնդակը եղեգէն դուրս կը մղէ, դ. Հուսկ ուրեմն, օդոյ մէջ ձևացած ալիքներէն, ընթացող գնդակէն, և վառօղի բորբոքմանէ ձևացած կազերէն :

Հրազիմուց ճայթման լսելեայ վրայ ըրած ազդեցութիւնն, հնչական ալեաց՝ թմբկին և միանգամայն ամբողջական գործարանին մէջ փոխանցելէն կը ծնանի: Այսու թմբուկն կը խորտակի, լսելական գործառնութիւնը կը խանգարին. օրինակ իմն, կը խլանայ ականջն, և ստէպ տեսակ տեսակ աղիտալի անպատեհութիւնը կը ծնանին, ինչպէս, այլագունութիւն երեսաց, խառնուրդ սրտի, ցաւ գլխոյ և գլխի պտոյտ, նուազումն, ծամածռութիւն դիմաց, հոսումն լորձանց և ցաւ ատամանց:

Քոպայք և ևիքէլ չեն պարզ մարմիւնք. — կը կարծուի, թէ ֆրիւս և Շմիթ տարրաբաշխած ըլլան քոպալթ և նիքէլ մետաղները, և երկուքին մէջ ևս գտած ըլլան հասարակայ կազմիչ մը՝ որ այս երկու մետաղաց աղերուն գոյները կը փոփոխէ, տալով մանիշակի գոյն քոպալթի զուտ աղերուն, և մութ կանաչ նիքելի աղերուն: Ի Մոնաքոյ գումարուած տարրաբանական ընկերութեան ժողովոյն մէջ, ֆրիւս նկարագրեց իրենց ըրած խուզարկութիւնը, որովք յաջողած էին ստանալ այս արդիւնքս:

Լոռսագրուռիւն գիշերային ծաղկանց. — Կրան՝ մագնիսի լոյսը գործածեց կակտոնոյ (cactus) տեսակի մը ծաղկանց լուսանկարն հանելու, որ գիշերները միայն կը ծաղկի: Իւր առաջին փորձն նախ Ս. Հեդինէի մէջ ըրաւ Արմտիկ եռանկիւնային (cereus triangularis) կոչուած բուսոյն վրայ: Ասոր ծաղիկը կը բացուի գիշերուան սկիզբը, և կը թառամի՝ առաւօտեան իննին կամ տասին միջոց՝ արեգական ճառագայթից ազդեցութենէն:

Կէս գիշերին, այս գեղեցիկ ծաղկան շրջապատը 18 բթաչափ մեծութիւն կ'ունենայ, և լուսնի լուսով կը գտնուին յաճախ այնպիսի արմատներ, որոց իւրաքանչիւրն 50 կամ 60 հատ գեղեցիկ բացուած ծաղիկներ կ'ունենան:

Պայծառ լուսին եղած գիշերները այս ծաղիկներս այժմերևոյ (chèvrefeuille) հոտոյն նման անուշահոտութիւն կը բուրեն, մինչդեռ մութ գիշերները նոյն հոտը չեն ունենար: Կրան՝ համոզեալ է թէ լուսնի ճառագայթքն մեծ ազդեցութիւն ունենան ասոնց վրայ: Սակայն մենք կրնանք ուրիշ կերպով ևս մեկնել զայս, ինչպէս Առաւիժոյ կ'ապացուցանէ. գիշերը լուսնի ատեն, երկրիս ճառագայթացու մը սաստիկ է, այն պատճառաւ այս տեսակ բուսոյ հոտաւէտ նիւթերն երազ կը գործըրինանս:

Արուեստական արևոյք և առանց ճիւղ վառող. — Պատերազմական զաշտի մը մէջ վառողին ծուխը ստոյգ նշան մ'է թշնամեաց, որով կը գիտնան և կը դիտեն հակառակ բանակին ունեցած դիրքը և անոնց զօրութիւնը: Գիտութեանց յառաջագիմելումն ստիպուեցան գտնել առանց ծուխի վառողը և այսօրս կը գործածեն:

Կը ջանան արդ. արուեստական ամպեր կազմել, որպէս զի պատերազմական զաշտի վրայ հակառակորդ բանակքն կարենան գործածել իրենց զէնքերը՝ ծածուկ 'ի թշնամեաց:

Շատ ջանացին ամէն կողմանէ գտնել միջոցներ գիշերային պատերազմ ընելու. չկարենալով յաջողիլ կը ճգնին արդ. ցորեկը գիշերուան փոխարկել: Կը յուսան յաջող ելք մ'ունենալ այս ձեռնարկէն, ցորեկ ատեն գիշերուան պէս ծածուկ պատերազմիլ ընդդէմ թշնամեաց, ունելով ի ձեռին ամենայն պատերազմական զիւրութիւնքը:

Հաշկիքները պահելու և նոր կերպ մի հնարեց հաւկթաց պահպանութեան: Պէտք է ընկղմել զանոնք հինգ վեց վայրկեան կտաւատի իւղի մէջ, և թողուլ 24 ժամ՝ բացօթեայ որ չորնան, ապա զետեղել զանոնք փայտի սղոցութի կամ տանի մէջ: Սա՛ս իւրաքանչիւր ամիս կշռելով այս հաւկթիւնները, տեսաւ որ տարուէ մը վերջ ամենեին կշռոյ տարբերութիւն չկար: Եփելով քիչ մը կտաւատի իւղի համն ունէին, սակայն տնտեսական միւս գործածութեանց լաւ կը ծառայէին:

ԿԵՆԴՈՆԵՑՑ ՈՄԱՆՑ ՏԱՐԻՔՆ

Իւրաքանչիւր կենդանեաց տեսակը ունին իրենց յատուկ տարիք կամ ժամանակ մը, յորում կը սպառի սովորաբար անոնց կենաց շրջանն. և հա՛ս կը դնեմք աստ ցուցակ մը աւելի ընտանեգոյն և ծանօթ կենդանեաց, թէ որչափ կ'ապրին սովորաբար:

Կէտն կամ պալէնան կ'ապրի գրեթէ 1000 տարի. փիղն՝ 150-200 տարի. կոկորդիլոսն կ'ապրի 100 տարի. նոյնպէս անզոն, արծիւն և ազուան կ'ապրին սովորաբար 100 տարի. առիւծ՝ 60 տարի. ունգեղջիւր և ուղան՝ 50-60 տարի. թուխակն՝ 50. արտուտն՝ 40. ցուլն՝ 30 տարի. եղնիկն և ձին 25-30 տարի. շուներ՝ 23-28. սիրամարգ՝ 28. օձաձուկը՝ 25 տարի. խոզն և արջ՝ 20 տարի. նոյնպէս գայլը, կովը և պաղաղը կ'ապրին 20 տարի. պլպուլն՝ 16-20. աղուէս և կատուն՝ 18. դեղձանիկն՝ 10-20 տարի. ծիտն 10-15 տարի. ոչխարն՝ 12. մարախը, այծն և հաւն՝ 10. նապաստակն՝ 7-10 տարի. սկիւռն՝ 6. իշամեղուն՝ 4 տարի:

ԳՆԱՐ